

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

ԵՊՀ-ի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 2016 թվականի հունիսի 10-ին կայացած նիստի

Օրակարգ.

1. 2015-2016 ուստարվա առկա ուսուցման ավարտական աշխատանքների պաշտպանության և ատեստավորման քննությունների հանձնաժողովների նախագահների հաշվետվությունը:

/զեկ. հանձնաժողովի նախ. պրոֆ Գ.Կարապետյան, Ս.Հովհաննիսյան/

2. 2015-2016 ուսումնական և արտադրական պրակտիկաների նախապատրաստման ընթացքը ֆակուլտետում

/զեկ. փոխդեկան Ա.Թ.Գրիգորյան/

3. 2015-2016 ուստարվա 2-րդ կիսամյակի քննությունների ընթացքը ֆակուլտետում

/զեկ. փոխդեկան Վ.Վարդանյան/

4. Առկա ուսուցման ասպիրանտների ատեստավորում

/զեկ. ամբ. վարիչներ/

5. Ընթացիկ հարցեր

ԼՍԵՑԻՆ - 2015-2016 ուստարվա առկա ուսուցման հանձնաժողովի նախագահ պրոֆ Գ.Կարապետյանի հաշվետվությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Վ.Պ.Վարդանյանը – Շեշտելով ուսանողների պատրաստակամությունը՝ Վ.Վարդանյանը նշեց, որ բացառիկ դեպքերում ավարտական աշխատանքներում բացակայում էր գրականության ցանկը կամ եզրակացությունը:

Մ.Ա.Գրիգորյան – Իր խոսքում Մ.Գրիգորյանը խոսեց “մագիստրոսի” որպես գիտության մեջ 1-ին աստիճան ունեցող գիտնականի մասին: Եվ վերոհիշյալ աստիճանի համար անթույլատրելի է «միջին» ՄՈԳ ունենալը: Մ.Գրիգորյանը հրավիրեց ամբիոնների վարիչների ուշադրությունը մասնագիտական որակը բարձրացնելու համար: Խոսքի վերջում նա շնորհակալություն հայտնեց այլ

հիմնարկներից հրավիրված մասնագետներից՝ իրենց մասնակցությունը ցուցաբերելու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ – ընդունել ի գիտություն

ԼՄԵՑԻՆ – Փոխդեկան Ա.Թ.Գրիգորյանի հաղորդումը 2015-2016 ուսումնական և արտադրական պրակտիկաների վերաբերյալ: Իր խոսքում նա նշեց, որ ամբիոնի վարիչները հետևողական կերպով ծանոթացրել են ուսանողներին անվտանգության կանոնների հետ: Ներկայացրել ուսանողների իրավունքներն ու պարտականությունները դաշտային պրակտիկայի ընթացքում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Թ.Գ.Վարդանյան – Իր խոսքում նա փորձեց շեշտադրել պրակտիկաների վերահանձնաման կարգի և կրեդիտների վճարման փոփոխության մասին:

Ս.Ս.Ներսեսյան – Դժգոհեց պրակտիկայի ժամանակահատվածում բժշկի բացակայությունից, ինչը անհրաժեշտ համարեց դաշտային պայմաններից /միջատների խայթոց/ ելնելով:

Մ.Ա.Գրիգորյան – Խոսքում նշեց կուրատորների տարվելիք աշխատանքի մասին՝ կապված ուսումնական և արտադրական պրակտիկաների հետ: Ուսանողը գիտակցական մակարդակով պետք է հասկանա, դաշտում ստացած գիտելիքի արժեքը: Վճարվելիք կրեդիտատարության վարձը չէ որ պետք է ստիպի ուսանողին գիտելիք ստանալ:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հանձնարարել ամբիոնի վարիչներին և կուրսերի կուրատորներին նախքան պրակտիկայի մեկնելը բացատրական և նախապատրաստական աշխատանք տանել:

ԼՄԵՑԻՆ – Փոխդեկան Վ.Պ.Վաղանյանի հաղորդումը 2015-2016 ուս.տարվա 2-րդ կիսամյակի քննությունների ընթացքի վերաբերյալ: Իր խոսքում նա նշեց, որ Քննական ժամանակացույցները նախապես փակցված են եղել, նախապես զգուշացվել են քննական առարկաները դասավանդող դասախոսները: Նախքան քննաշրջանի սկիզբը ամբիոնի վարիչները ծանոթացել են ներկայացված հարցաշարերին և քննական տոմսերին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Մ.Ա.Գրիգորյան – Խոսքում նշեց ուսանողների անտեղյակությունը ստացած գնահատականների վերաբերյալ: Ուսանողի համար գնահատականը պարզ է դառնում միայն ՄՈԳ-ի միավորը տեսնելուց հետո: - Աշխատանք կա տանելու այս ուղղությամբ,-ասաց Մ.Գրիգորյանը՝ դիմելով ամբ.վարիչներին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հանձնարարել ամբիոնի վարիչներին և կուրսերի կուրատորներին նախքան ուսանողներին իրազեկ պահելու ստացած միավորների վերաբերյալ:

ԼՍԵՑԻՆ – Ամբիոնի վարիչների հաղորդումը առկա ուսուցման ասպիրանտների ատեստավորման վերաբերյալ: Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի 1-ին տարվա ասպիրանտներ Անի Մազմանյանի, Գորիկ Ավետիսյանի, 2-րդ տարվա ասպիրանտ Հայկ Մաքսիմի Մանասյանի ատեստավորման հարցը: Ջրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության ամբիոնի 1-ին տարվա ասպիրանտ Հրաչ Սարգսի Հայրոյանի, Երկրաֆիզիկայի ամբիոնի 1-ին տարվա ասպիրանտ Սարգիս Մոսի Մանուկյանի ատեստավորման հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ատեստավորել ներկայացված ասպիրանտներին ուսումը շարունակելու համար:

ԸՆԹԱՑԻՎ ՀԱՐՑԵՐ

ԼՍԵՑԻՆ – Ռեզիոնալ երկրաբանության, պետրոլոգիայի և օգտակար հանածոների հանքավայրերի ամբիոնի վարիչ Շ.Վ.Խաչատրյանի հաղորդումը, որպես առաջատար կազմակերպություն, հաստատելու Հայկ Իզիթյանի թեկնածուական ատենախոսության վերաբերյալ ներյակացված կարծիքը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

Վ.Պ.Վարդանյանը – Հ.Իզիթյանին ուղղված հարցում նա փորձեց ճշտել ուսումնասիրվող տեղամասի խորությունը: Եվ արդյո՞ք այլ երկրաֆիզիկական մեթոդի կիրառումն ավելի չէր պարզեցնի եղած պատկերը:

Ս.Հ.Հայրոյան – Արդյո՞ք ուսումնասիրվող տարածքում առկա են ակտիվ խզվածքներ, որոշակի են վերջիններիս տարածման լայնությունները և առկա են արդյո՞ք փաստացի տվյալներ գեոդինամիկական շարժումների վերաբերյալ:

Ուսումնասիրվող տարածքը ո՞ր կառուցվածքային տարրին են վերագրում /վերնետք, վարնետք/:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաշվի առնելով Հ.Իգիթյանի կողմից ներկայացված նյութը և հնչեցրած պատասխանները՝ հաստատել ներկայացված կարծիքը:

Խորհրդի նախագահ

Մ.Ա.Գրիգորյան

Խորհրդի քարտուղար

Ե.Ս.Մանուկյան